ՆՈՐ-ԴԱՐ

№ 197 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 24 Նոյեմբերի 1888 Հինգշաբթի 24 Նոյեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 197

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր. 50 կ., հատ վ՚ 5 կոպէկ։
Բաժանորդ գրուում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամ։
Յայտարարութիւնների բաւին 2 կ., բիւրամեայի համար կրկնապատիկ։

ՀԱՅԱԶԳԱՅԻՆ-ԳՐԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՑ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Կը հրապարակուի նոյն չափով և ձրագրով

Խմբագրութիւնը կ՚ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում Ղկիչեան «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12։

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Տպագրական գործը մեր մէջ։

Քրոնիկոն. — Լուրեր։ Մամուլի շուրջը։ Գիւղատնտեսական ցուցահանդէս։

Թղթակցութիւններ.—Ղուլալի։ Գէօրլու։ Բագու։

Քաղաքական. — Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագիրներ։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 23 Նոյեմբերի 1888

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄԵՐ ՄԷՋ

—

Մեր կարծիքով հայոց թերթերը մի որ և է խնդիր յարուցանելով, մի որ և է առաջարկութիւն անելով պէտք է ի նկատի ունենան հետևեալ երեք պայմանները. ա) յարուցած խնդիրը կամ առաջարկութիւնը պէտք է նպատակայարմար և օգտաւէտ լինի. բ) խնդիր յարուցանողը կամ առաջարկութիւն անողը պէտք է հաւատացած լինի և հիմք ունենայ հաւատալու, որ իւր յարուցած խնդիրը կամ իւր առաջարկութիւնը կարելի է իրագործել և գ) պէտք է յարուցած խնդրի լուծումը և արած առաջարկութեան իրագործումը կախուած լինի հայ ընթերցող հասարակութիւնից, հայ ազգից։

Այս երեք պայմաններից դուրս մեր լրագրերի մէջ յարուցած խնդիրները կամ արած առաջարկութիւնները ոչինչ նշանակութիւն չունին, կը մնան առանց գործնական հետևանքի։

Մեր լրագրերի մէջ յարուցած, վերոգրեալ պայմաններին չհամապատասխանող, խնդիրները կարող են միմիայն «պոպէնմէյկո» նշանակութիւն ունենալ, այսինքն ընթերցողը կը կարդայ և նրա միտքը կը լուսաւորուի յարուցած խնդրի մէջ յայտնած մտքերով. բայց դրա համար հարկաւոր է, որ խնդիր յարուցանողը շնորհքով լուսաբանէ իւր յարուցած խնդիրը, որի մէջ կարելի լինէր գտնել թէ խելք, թէ գիտութիւն և թէ նուրբ դատողութիւն, այլապէս ոչինչ նշանակութիւն չունին այդ տեսակ խնդիրները։

Այս անգամ մեր գրագէտների և մեր ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրում ենք մեր տպագրութեան գործի դրութեան վրայ։

Ձենք ուզում Գուտենբերգից սկսել, բայց կասենք, որ շատ հետաքրքիր և օգտաւէտ գործ կատարած կը լինէր այն մարդը, որ սկզբից մինչև օրս մեր մէջ տպագրութեան համար գործ դրած տառերի մի քարտէզ կազմէր՝ ճշդութեամբ հետևելով ժամանակագրութեանը։

Այդպիսով ընթերցող հասարակութիւնը կը տեսնէր, թէ մեր մէջ տպագրութեան գործի սկզբից մինչև մեր օրերը ինչ ձև, ինչ տեսք են ունեցել հայոց տառերը, ինչպիսի փոփոխութիւնների են ենթարկուել այդ տառերը և որպիսի առաջադիմութիւն է նկատուում տառերի գեղեցկութեան և յարմարութեան վերաբերութեամբ։ Որքան մենք տեսնում ենք, ի նկատի առնելով մեր պարբերական մամուլի և ուրիշ գրքերի հրատարակութեան համար գործ դրած տառերը, մեր տպագրութեան գործը շատ դանդաղ է առաջ ընթանում. ինչ տառերի գեղեցկութեան և յարմարութեան է վերաբերում։ Դանդաղը շատ է, պէտք է ասենք, որ անշարժութեան է մատնուած։ Ձշմարիտ է Վենետիկում, Վիեննայում, Պարիզում համեմատաբար աւելի լաւ տեսակ տառեր են պատրաստում, բայց այդ տառերից անգամ զուրկ ենք մենք։

Շատ տեսակ չեն մեր հայոց տառերը տպագրութեան համար և եղածն էլ ամեն տպարան չունի. մէկ տպարան կարողանում է ձեռք բերել մէկ տեսակ տառի մայրը և պահում է իրեն համար և ոչ ոքի չէ տալիս. այդ օրինակին հետևում են և միւս տպարանատէրերը և իրենց ձեռք բերած այս կամ այն տառի տեսակից ոչ ոքին չեն տալիս ձուլելու։ Մի որ և է տառի մայրը պատրաստում է գուցէ մի անճաշակ և ոչ էլ այնքան հմուտ արհեստաւոր։ Այդ տեսակ տառի մայրը ձեռք է բերում— շատ անգամ պատահմամբ—մի տպարանատէր և ձուլում է այդ տառը և բանեցնում իւր տպարանում։ Մեր բոլոր պարբերական թերթերը, գրքերի հրատարակիչներ տպել են տալիս այդ պատահական տառով։

Մեր տպագրութեան դործը՝ ինչ տառերին է վերաբերում, հիմնաւոր վերանորոգութեան կարօտ է։

Պէտք է հմուտ և ճաշակիտէր վարպետների ձեռքով պատրաստել նոր տառերի մայրեր։ Այդտեղ գլխաւորապէս ի նկատի պէտք է առնել տառի ձևը, դեղեցկութիւնը և մամուլի տակ ձրգելու և շարելու ժամանակ յարմարութիւնը։ Այդ վերանորոգութեան մէջ բացի մեքենական արհեստի հմտութիւնից մեծ տեղ ունի և ճաշակը։ Ի հարկէ գեղեցիկ ճաշակ կարելի չէ օրոնել հասարակ և համբակ արհեստաւորի մօտ։

Այդ գործին կարող չէ ձեռնարկել այս կամ այն տպարանատէրը, որովհետև այդտեղ փող է հարկաւոր. իսկ մեր տպարանատէրերը չեն միանալ, միասին չեն գործել։

Հաշիւ էլ չէ, որ նրանք միանան, միասին գործեն, փող ծախսեն և լաւ և գեղեցիկ տառերի մօդելների, օրինակների համար մեծ գանակ նշանակեն—քանի որ առանց ծախսեր անելու, առանց միանալու էլ կարելի է գործը առաջ տանել, եօլայ գնալ։

Բայց մենք ունենք ընկերութիւններ, մենք ունենք հարուստ, բարեգործ հայեր, որոնք կարող էին այդ կարևոր գործին գլուխ կանգնել։

Մի անգամ մեր տպագրութեան գործը հիմնովին վերանորոգութեան ենթարկելով կարծում ենք, որ կարելի կը լինէր և մեր տառը կրճատել, որ այնքան ահագին տեղ է բռնում հայերէն բառերի մէջ։ Կրճատել խօսքով ուզում ենք առաջարկել տառից պակասացնել նրա երկու գիծը և թողնել միմիայն—մի ուղղագիծը։ Այդպիսով գրքերի հրատարակիչներն այն օգուտն ունէին, որ միևնոյն բովանդակութեամբ գրքի համար աւելի քիչ թուղթ կը բանեցնեն և տպագրութեան վրայ համեմատաբար աւելի պակաս ծախք կունենան։ Իսկ ինչ վերաբերում է պարբերական թերթերին՝ տառից երկու ուղղագիծը պակասեցնելով նրանց գործը ահագին փոփոխութեան է ենթարկում բոլորովին ընթերցող հասարակութեան օգտին։ Այդտեղ խմբագիր-հրատարակիչը ոչ թուղթի, ոչ էլ տպարանի և այլ ծախսերի խնայողութիւն է անում. այդ ճշմարիտ է։ Բայց նա իւր թերթի մեծութեան չափը պահպանելով, որոշ շրջանակի մէջ իւրաքանչիւր համարում այդպիսով կարող է մէկ ու կէս անգամ աւելի շատ նիւթ տալ։

Հայերէն տառից երկու ուղղագիծը պակասեցնելով տեղի ահագին խնայողութիւն է լինում։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ուրբաթ, Նոյեմբերի 22-ին երկրիս կառավարչապետ իշ. Դոնդուկով-Կորսակովը ուղևորեցաւ Բաթում, ուր, «Кав.»-ի ասելով, կը մնայ մինչև Նոյեմբերի 29-ը։

—

Թիֆլիսի պրօգիմնազիոնի տեսուչը դիմելով I և II գիմնազիոնների տեսուչներին, տեղեկութիւն է խնդրել, թէ արդեօք պրօգիմնազիոնի Ե-րդ դասատան աշակերտները կարող են առաջիկայ տարին մտնել լեշեալ գիմնազիոնների համապատասխան դասատները։ Պատասխան եղել է, թէ տեղ չլինելու պատճառով, չեն կարող։ Ասած է նկատի ունենալով այդ հանգամանքը, կովկասի ուսումնարանական շրջանի ս. Հոգևորականն դիմել է Թիֆլիսի քաղաքագլխին առաջարկելով քաղ. խորհրդի քննութեան ներկայացնել պրօգիմնազիոն ընդունակելու համար օժանդակութիւն նշանակելու խնդիրը։ Պակասում է, «Тиф. Лист.»-ի ասելով, 21,336 րուբլի։

—

Ագնիս տիկին Եդինաբէթ Տէր-Դաւթեանցը «Նոր-Դար»-ին 1889-ի համար երեք օրինակի բաժանորդ գրուելով ուղարկել է 30 րուբլի։ Մի համարը երեն համար, մէկը՝ Մոսկուայի Պետրովսկի ակադէմիայի հայ ուսանողներին նուէր, իսկ երրորդ համարը թողած է խմբագրութեանս տնօրինութեանը։

—

Բաղուից մեզ գրում են.—«Կարդացի Մանիի մասին «Նոր-Դար»-ի գրածները, կարդացի հանգուցեալի իւր կնոջը ուղղած նամակը և արտասուեցի։ Աստուածը, սիրտս լցուեցաւ ցաւով։ Եթէ ես ունենայի մեծ կարողութիւն, կէսը կը նուիրէի հանգուցեալի ընտանիքին, որովհետև «Նոր-Դար»-ը պատմեց մեզ նրա լաւութիւնները, նրա հիւրասիրութիւնը։ Մի քանի մարդկանց պատճառով Թողեց Մանին իւր կինը, իւր զաւակները զժբաղդութեան մէջ... այդ է լաւ և հիւրասէր մարդու վախճանը։ Մեծ. խմբագիր. ուղարկելով ձեզ 20 րուբլի, խնդրում եմ այդ գումարը հասցնէք Մանիի ընտանիքին։ Բաղդասար Ա. Ասերեանց»։

—

Ներկայումս Թիֆլիսում կարելի է առատութեամբ հաշուել այն բոլոր վայրերը, որոնք զանազան պատրուակներով փող են կորզում հասարակութեան հասարակ դասակարգի գրպանից։ Ձնչելով զուարճութեան վայրերը, չնչելով ցերկը, կարելի է մատնացոյց անել «ցուցահանդէս»-ների վրայ։ Մի քայլափոխ փողոցի վրայ՝ մի ինչ-որ մուզէյ, որ ոչինչ հետաքրքրութիւն չէ ներկայացնում, պրօսպէկտի վրայ կան՝ ա. մի ինչ-որ պանօրամ, բ. «Պարիզի գիղեցկուհի»՝ 9 պուդ 15 գրուանքայ կշռով մի կին, որին լոկ տեսնելու համար 15—25 կոպէկ պէտք է վճարել, գ. գերհատկէրի «Տատման»՝ որ արդէն հնացած բան է... և այլն և այլն։

Ամեն տարի դրանց թիւը աւելանում է և հասարակ ժողովուրդը այցելում է իւր կոպէկները չխնայելով դրանց համար։ Սակայն կայ և մի մուզէյ, որի վրայ իսկապէս արժէր ուշադրութիւն դարձնել, — Վիներէյմ Վինտերի մուզէյը, որ գտնւում է Մադաթեան կղզու վրայ։ Մուզէյը բաղկացած է մի քանի մասերից և հաւատում է թէ պատմական, թէ այլաբանական և թէ իրական պատկերներով, արձաններով, տեսարաններով և այլն։ Մուզէյի երկրորդ բաժնում գետեղուած է բացառապէս մարդիս կազմութիւնն և կազմակերպութիւնը, հիւանդութիւնները, օպէրացիաները... մի խօսքով մարդի ամբողջ կեանքը պատկերացրած է ամենամանրամասն կերպով արձանների վրայ, որոնք նշանաւոր են իրենց կազմութեան ներքուստ, բնականութեամբ։ Բ. բաժինը մտնել կարող են միայն չափահասները, իսկ բան հասկանալ, օգտուել կարող են մարդակազմութեան հետ փոքր ի շատէ ծանօթութիւն ունեցողները։

Առաջին բաժնում շատ կենդանի և սքանչելի է կէօպատրայի մահը՝ նրա վերջին րոպէները, աչքի շարժուածքը, կծքի անկանոն ելևէջը. Լէդան և կարապը՝ յունական ասանդութիւնից. Լօրէչան. Եկատերինա II կայսրուհին, մարդկային ցեղի, զանազան ազգութիւնների տիպարները,

ՀԱՅԿԱԶՆՈՒԹ.—Ֆրանսիայում և նրա գաղութներում

—

Լրատուական և «Matériaux pour l'histoire économique et sociale de la France» ժողովածուի հրատարակության մասին հրապարակված հոդվածներում ֆրանսիական պատմագրության ներկայացուցիչները ուշադրություն են դարձնում ֆրանսիական հասարակության տնտեսական զարգացման ուսումնասիրության անհրաժեշտության վրա։ Ֆրանսիայի I պատմության ինստիտուտի տնօրեն Ֆ. Բրոդելը նշում է, որ ֆրանսիական պատմագրությունը մինչև վերջին ժամանակները գերազանցապես զբաղվել է քաղաքական պատմության հարցերով, մինչդեռ տնտեսական կյանքի ուսումնասիրությունը ֆրանսիական պատմագրության մեջ ստացել է միայն երկրորդական նշանակություն։ Ֆրանսիական պատմագրության մեջ տնտեսական կյանքի ուսումնասիրության ուշադրության կենտրոնում են գտնվել միայն առանձին ճյուղերի պատմության հարցերը, ինչպես, օրինակ, գյուղատնտեսության, արդյունաբերության, առևտրի պատմության հարցերը։ Ընդհանուր տնտեսական զարգացման հարցերը, ինչպես նաև տնտեսական զարգացման և քաղաքական կյանքի միջև եղած կապերի հարցերը մնացել են ուշադրությունից դուրս։ Ֆրանսիական պատմագրության մեջ տնտեսական զարգացման հարցերի ուսումնասիրության ուշադրության կենտրոնում են գտնվել միայն առանձին ճյուղերի պատմության հարցերը։ Ընդհանուր տնտեսական զարգացման և քաղաքական կյանքի միջև եղած կապերի հարցերը մնացել են ուշադրությունից դուրս։ Ֆրանսիական պատմագրության մեջ տնտեսական զարգացման հարցերի ուսումնասիրության ուշադրության կենտրոնում են գտնվել միայն առանձին ճյուղերի պատմության հարցերը։ Ընդհանուր տնտեսական զարգացման և քաղաքական կյանքի միջև եղած կապերի հարցերը մնացել են ուշադրությունից դուրս։

—

ՊԱՐԶԱՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻ 15-Ի ԺՈՂՈՎԻ։

Նախագահ՝ Ա. Ալամդարեան։

Ներկայ են 15 պատգամաւորներ։

Ընթերցուեցաւ եւ հաստատուեցաւ նախորդ նիստի արձանագրութիւնը։

Ընթերցուեցաւ Ներսէսեան վարժարանի տեսչութեան 1887 թուի տարեկան տեղեկագիրը։

Ընթերցուեցաւ Ներսէսեան վարժարանի 1887 թուի տարեկան հաշուեքննութեան արձանագրութիւնը։

Ընթերցուեցաւ Ներսէսեան վարժարանի 1888 թ. գարնանային քննութեանց ցուցակը։

Ընթերցուեցաւ Ներսէսեան վարժարանի 28-ի թեմական ընտրութեան կանոնադրութիւնը։

Ներսէսեան վարժարանի 1888 թ. գարնանային քննութեանց ցուցակի համեմատ աշակերտների թիւը հետեւեալն է։

	Ներկայ	Բացակայ	Ընդամենը
Ա. դասարան	30	2	32
Բ. դասարան	28	1	29
Գ. դասարան	27	1	28
Դ. դասարան	25	1	26
Ե. դասարան	24	1	25
Զ. դասարան	23	1	24
Է. դասարան	22	1	23
Ը. դասարան	21	1	22
Թ. դասարան	20	1	21
Ժ. դասարան	19	1	20
Ընդամենը	249	12	261

Ներսէսեան վարժարանի 1887 թուի տարեկան հաշուեքննութեան արձանագրութեան մէջ նշանակուած է, որ Ներսէսեան վարժարանի ուսումնական գործերը կանոնաւոր ընթացք ունեցած են, եւ որ ուսուցիչները իրենց պարտականութիւնները կատարած են ջանասիրութեամբ։ Ներսէսեան վարժարանի 1888 թ. գարնանային քննութեանց ցուցակէն երեւում է, որ աշակերտները յառաջադիմած են։

Ներսէսեան վարժարանի տեսչութեան 1887 թուի տարեկան տեղեկագրի մէջ կարդացուեցաւ հետեւեալ առաջարկութիւնը։

Ներսէսեան վարժարանի տեսչութիւնը կը խնդրէ ազգային ժողովէն, որ ուսումնական տարուան սկիզբը յետաձգուի մինչեւ հոկտեմբերի 15-ը, որպէսզի ուսուցիչները ժամանակ ունենան ամառնային արձակուրդի ընթացքին իրենց ընտանիքներուն հետ անցուցած օրերուն համար ստացած ճանապարհածախսերը հաշուելու եւ ստանալու։

Ներսէսեան վարժարանի տեսչութեան առաջարկութիւնը ընդունուեցաւ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂՈՒԿԱՍԻ, 3 նոյեմբերի. — Ահա երկու տարի է, որ Շամշադին վիճակի բոլոր ժողովուրդը՝ հայ, ռուս, Թուրք մեծ նեղութեան մէջ են ցորենի պակասութեան կողմից, մանաւանդ այս տարի. միայն բացառութիւն են կազմում այս անգամ վերին և ներքին Ճամբարակեցիները, որոնք այս տարի՝ ցորենով, գետնախնձորով, կաղամբով ու զանազան հացաբոյսերով շատ հարուստ են։ Հացաբոյսերի սակաւութեան գլխաւոր պատճառներից մէկը տեղացիներն ընդունում են երկարատև զուրաղը (չորչին, երաշտ), որ այրեց ու չորացրեց արտերի արմատները. սրան զոհ գնացին Ղուկասի գիւղի արտերը։ Սակայն տեղ տեղ էլ անընդհատ տեղացող յորդ անձրևներն ու կարկուտներն արտերի մեծ մասը փճացրին. միւս մասը կարկուտը տարաւ և մնացածի հասկերն փոխանակ ցորենով լցուելու, ջրով լցուեցան։ Սրանց զոհ եղան բաղքեանդ գիւղի արտերը, նոյնպէս և մօտակայ Թուրքերի ու մալականների արտերը։ Այս տեսակ վնասներն այստեղի ժողովուրդն ընդունում է Աստուածանից պատիժ իրենց փըչացած կեանքի համար. ժողովուրդը տեսնում է, որ գողութիւնն ու մարդասպանութիւնը, չնութիւնն ու կեղտոտութիւնները, վնչժխանդութիւնն ու սատանայութիւնը մեծ մեծ քայլերով առաջ են գնում իրենց երկրում. ինչպէս ժողովուրդն ասում է, կարծես, ուղիղ որ այնպէս էլ է։

Չնայելով հացաբոյսերի սակաւութեանը, որ այս տարի պակաս է, այնու ամենայնիւ խանը 60 կոպէկով ցորեն է ծախւում, 30 կոպէկով գարի, 40 կ. կորեկ, 25 կ. հաճար, 40 կ. ճղոպուր (ընկոյզ), 8 կ. խնձորը, հաւը՝ 20 կ., 6 ձուն 5 կ., իւղի սրիչը՝ 30 կ. է, պանրինը՝ 20 կ., մեղրինը՝ 30 կ., գինու բաժանը՝ 40 կ.։

Բացի հացաբոյսերի սակաւութիւնից տակաւ է գինին, իւղը, պանիրը, գետնախնձորը, կտաւհատը, հունը, ղլորը, չաւթուղը, կծոխուրը. իսկ առատ է՝ սիգը, մասուրը, գիհուր, փռօշը, ճղոպուրը, խնձորը և սերկեւիլն ու մեղրը։

Ահա երկու տարի է, որ սելաւներն ու կարկուտները անդադար մեծամեծ վնասներ են հասցրել անասուններին և ժողովրդին ու շատ զոհեր տարել. սրանից կրած վնասները կարելի է ասել, որ հազարների է հասնում, օրինակ 1887 Թուի գարնանը քիչ էր մնացել, որ վերին Ճամբարակ գիւղը հիղեղուէր. սակայն Նախախնամութեան օգնութեամբն աղատուեց, այնպէս որ մի քանի Թուրք չուվդառներ իրենց գնած ոչխարներովը ջրին զոհ գնացին։ Նոյն Թուի օգոստոս ամսին՝ Ղուլալուի ու Թաթլու գիւղի գետերը մեանգամից վարարելով (երեկոյեան) մինչև 40 մարդ էր ջրախեղդ եղել։ Չեմ հաշւում կոտորուած ու խեղդոտուած անասունները։ 1888 Թուի փետրվար ու մարտ ամիսներում «ցուռ» կոչուած հիւանդութիւնը շատ վնաս տուեց բաղքեանդ գիւղի ոչխարներին, այնպէս որ հարիւրաւոր ոչխարներ կոտորուեցան և այս տարի գարնանային յորդ անձրևներն ու կարկուտները մինչև 500 ոչխար և 40 տաւար են կոտորել։

Այդ տարի Թուրքերը երկու հայ սպանեցին, մէկին այրելով և զանազան տանջանքներ տալով, իսկ միւսին՝ անգիտակցաբար հրացան արձակելով։ Մարդասպանութիւնն այս երկրում սովորական և ամենահասարակ դէպքերից մէկն է և ժողովրդի ամենօրեայ խօսակցութեան գլխաւոր նիւթերից մէկն։ Բացի մարդասպանութիւններից հայերի մէջ պատահել է, որ եղբայրն եղբօրն է սպանել, եղբայրը՝ քրոջն, այս տարի էլ զուլալուեցի մէկ կին իւր ամուսնուն սպանեց այնպէս, ինչպէս առհասարակ սպանում են շներին։

Թեղէ ժողովրդի դրութիւնը խիստ անտանելի է և յուսահատութեան է հասել ու նեղութիւնը կրկնապատկուել է անդուստ գողերի ձեռքից. շատերը զզուել են, Ճարերը կտրուել է, դադ ու բեզարն են եկել, ամեն բան Թողել են ու տուն հաւաքուել. եթէ տան առաջինը տաւարը հեռացաւ, այլ ևս տիրոջը չէ. գտնեն էլ չեն կարողանում ետ բերել, որովհետև վախում են, մի գուցէ Թշնամանան և մինչև կորածի գտնելն գան ու երկուսն էլ ուրիշ տանեն. կորածի եռևից մարդ եկող չկայ, որպէս զի գտնի. «Մարդ գամ ինչ անեմ, ա քէ մատաղ, քու որդու արև սադաղին ղուրբան, ընչի մհար մարդ գամ, ինչս ա կորել, ես հոմ գիժ չեմ, խև չեմ, պէչ չեմ, որ մի տաւարի մհար գլուխը իմ դուշմաններին մատաղ տամ, դուշմանի սրտով ըլիմ. իմ քեօրփա ըրէխանցս Թողամ գնաւուրի հողին ու ջրին. էն ոխ իմ ըրէխի Թաթին մի պատառ չոր հաց կը դնի, որ ուտի. ոհմ ասեմ, ինչ անեմ, ինչ ա ձեռովս գալիս, ով ա ինձ ականջ դնում, ես ես լսած ես մի քամի փչած. ես ես ըլած, ես չլած, նրանց շատ վէչէն ա, Թէ ես հոգից հոգի, հողէ հող քանդւում ա, դուռս երեսիս խփւում ա»։

Եթէ մենք Շամշադինի վիճակը անուանենք եղեռնագործութեան հայրենիք, երբէք սխալուած չենք լինիլ, այլ իրեն արժանի անունը տուած կը լինենք առանց կողմնապաշտութեան։

Վերև յիշուած դէպքերն ու եղեռնագործութիւնները շատ յաճախ կըրկնւում են. սակայն մենք տեղեկութիւն չենք ստանում։

Ե. Գ.

ԳԵՕՐԻՍ, 16 նոյեմբ.—Ահա մի տարին լրանում է, որ հարց է բարձրացրած Գեօրիսում հայոց ծխական ուսումնարան բանալու մասին. գանի գործը տաք էր՝ հոգաբարձունները ընտրեցին, եկեղեցում այդ մասին քարոզները ասացին. առաջին տպաւորութեան տակ ինչքը չպատահեցան, Թէ գիւղացիները ընչպէս վերաբերուեցին դէպի ուսումնարանի բացման գործը՝ աւելորդ է ասել. միայն դըժբաղդաբար, մինչև այժմ գործը մի մխիթարական ելք չէ ստացել։ Ուսումնարանի մասին կողմնակի կերպով խօսւում է միայն հրապարակներում, որտեղ սովորաբար անգործ գիւղացիները և անգործ խոջանները հաւաքւում են և սկսում են զանազան առարկաների մասին դատողութիւններ տալ, օրինակ՝ տեղացիների մէկի ծառան իւր տիրոջ ձին ջուրն է տանում, ամենքը մի կողմից սկսում են ձիու յատկութեան մասին դատողութիւններ տալ, հակառակ կարծիք ունեցողների մէջ բարձրանում է աղաղակ աղմուկ. այդ դատարկ աղմուկի վրայ հաւաքւում են ուրիշները. Մէկը նկատում է, որ գործները Թողած զուր աղմուկ են բարձրացրել, աւելացնելով, որ աւելի լաւ կը լինէը խօսէինք բացուելիք ուսումնարանի մասին։ Այս խօսքերի վրայ իսկոյն աղաղակը դադրում է, կարծես ձահճի մէջի կռկռացող գորտերի մէջ քար ձգեցիր... ուսումնարանի անունը տուեցիր Թէ չէ, կը տեսնես մեծ աղմկողնին «քսուեցրին», մնացողներն էլ լոկ խօսելու համար մի երկու խօսք ասացին և նոյնպէս հեռացան, գիտնալով, որ գատարկ աղմկով ուսումնարան չի բացուիլ, որ ուսումնարան բանալը փող է պահանջում։

Բայց կան մի քանի անձեր էլ, որոնք ուսումնարանի բացման համար աշխատում են և ամեն միջոց գործ են դնում, որ կարողանան գլուխ բերել այդ գործը, որի պահանջը մեծ է (Թէև այստեղ կառավարչութեան կողմից բացած երկդասեան տղայոց ուսումնարան կայ, բայց այդ ուսումնարանում սովորում են 28 գլուխից Թէ հայ և Թէ Թուրք մանուկները, որոնց Թիւը հասնում է 85-ի)։ Եւ ահա այդ մարդիկ, երևի իրենք չկարողանալով համոզել իրենց գիւղացիներին (գուցէ ուրիշ պատճառ էլ կայ, չգիտեմ), վարձել են նոյնպէս Զանգեզուր գաւառից մի ուրիշ անձնաւորութիւն, որը խոստացել է 60 րուբլի վարձով երկու ամսուայ միջոցում համոզել գիւղացիներին բանալու ուսումնարանը և յատկացնելու նրան գեօրիսեցիների ամառուայ արօտատեղերի արդիւնքը, որը մինչև այժմ կուլ է գնում տանուտէրերի և այլ բաղդախնդիր անձերին։

Հենց հարիւր տնից աւելի բնակիչ ունեցող գիւղն իւր մէջ մի մարդ չէ գտնում, որ կարողանայ իւր հարևաններին, իւր չհնացուն համոզել։ Ո՛ւր են այն մարդիկ, որոնք ուրիշ զանազան շահաւէտ դէպքերում ամբողջ գիւղը իրար են տալիս, Թշնամիներին հաշտեցնում, հաշտերին Թշնամացնում, իրենց ցանկացածը կատարում. ո՛ւր են նրանք, ինչո՛ւ են ծակերը մտնում, ինչո՛ւ չեն «փափախներն կռնատակը կալած» մտնում նոյն գիւղացիների մէջ, որոնց շատ անգամ ստիպել են համաձայնելու իրենց հետ...

Ամօթ գեօրիսեցիների համար, հազար ամօթ, որ իրենց հինգ հարիւր տուն բնակութեան մէջ մի մարդ չեն գտնում, որը յարգուած լինի բոլորից, այլ ստորանում են այն աստիճան, որ դիմում են մի օտարի, այն էլ վճարով, որ այդ օտարը իրենց համոզէ, տգէտներին հասկացնէ, յամառներին կակղացնէ։

Իրենց տասնեակ հազարներով պարծեցող խոջաները ուսումնարանի անունը տալիս, «մկան ծակին տասը Թուման են տալիս», որ չերևան և գրպանները կոպէկ չդուրս գայ։ Պարոն խոջաները, գիտացէք, որ բացի բարի անունից աշխարհումս ոչինչ չէ մնալու, բոլորը անհետանալու է ինչպէս ծուխ. եթէ ուզում էք բարի յիշատակ Թողնել ձեր յետագաների մէջ՝ մի խնայէք ձեր կոպէկները, բացէք ձեր քսակի բերանը և դրանով բացէք ուսումնարանը, որ ձեր բարի անունը մնայ։

Ս. Շ.

ԲԱԳՈՒ, 21 նոյեմբերի.—Նոյեմբերի 11-ին Նօբէլի գործարանում կրակ հանգցնելու ժամանակ պատահած փորձանքը այսպէս է պատահել.— գործարանում հրդեհ յայտնուեց և բանուորները ժողովուեցան հանգցնելու համար։ Այդ իսկ միջոցին պատրաստում է այն գետնանց խողովակը, որ միացած է նաւթի աւազանի հետ։ Իսկոյն նկատում են այդ և սկսում են նուր Թափել այրուող խողովակի վրայ... բայց յանկարծ մեծ որոտումով տրաքւում է նաւթի աւազանը և ահա այդտեղ բացւում է սարսափելի պատկեր,—այրւում է օդը, Թափւում են կրակի բոցեր, այրւում են և մարդիկ. լսւում է օրհասական հառաչանք, պատկերանում է քամնելի տանջանքը... ամեն մարդ աշխատում է իւր անձն ազատել, մինչդեռ անկեաններն օգնութիւն են կանչում։

Ծանր հիւանդներին Նօբէլի հիւանդանոցից փոխադրեցին Բայիլեան զինուորական հիւանդանոցը։ Վիրաւոր-այրուածներից մեռել են երեք հոգի՝ Խան Կրասնով (բանուոր), Ալեկսէյ Գօտոր (տեխնիկ), Վասիլ Գիսման (փականագործ)։ Հիւանդանոցում վիրաւորեալները հետևեալ պատկերն են ներկայացնում.—մի սենեակում առանձնապէս գետեղուած են բոլոր Թուրք վիրաւորեալները, որոնց երեսները ծածկուած է դիմակով, որպէս զի այցելողը չզարհուրի տեսնելով այն սոսկալի վէրքերը, որ կրակը բացել է նրանց դէմքերի վրայ.—մի քանիսի աչքերը փակ են, ունքերը, գլխի մազերը խանձուած են, մի տեղ երեսը և շրթունքները կուչ են եկած՝ բայ ատամները ամուր սեղմուած. լսւում են խուլ հառաչանքներ. վիրաւորները աղօթում են ողբալով իրենց սեփ օրը, աղօթում են Աւետարանին, որ շուտով մահ ուղարկէ իրենց, որով և ազատէ իրենց այս անտանելի տառապանքից։ Մի քանիսը, Թէպէտ վիրաւորուած՝ բայց ոչ այնքան ծանր, կարողանում են հետաքրքիր հարցասիրներին տեղեկութիւն տալ եղած փորձանքի մասին։

Մի ուրիշ բաժնում գետեղուած են քրիստոնեաները. Ձեր առաջ նոյնպէս բացւում է առաջին պատկերը։ Այդտեղ են մի քանի վիրաւորուածների կանայքը, որոնք մասնակցում են իրենց վշտալի ամուսինների դժբաղդութեանը. ահա այնտեղ պառկած է խեղճ պանդուխտը, չունի բարեկամ, չունի մայր, հեռու հայրենիքից, զրկուած ծնողական հայեցողութիւնից և մխիթարական խօսքերից՝ անկնում է իւր պանդխտութեան համար հայրենիքից դուրս եկած օրը, անիծում է իւր անբախտ կեանքը։

Երրորդ բաժնում տեղաւորուած են ամենավտանգաւոր այրուածները. այդտեղ այցելողը ստիպուած քիթը բռնում է—այդտեղ փչում է խանձահոտ՝ այրուած մարմիններից, այդտեղ Թախտի վրայ ընկած է մի կիսաղուէշ դիակ՝ ծածկուած բամբակով. դրան է վիճակուած ամենասարսափելի տանջանք. նա զրկուած է չարժուելու ընդունակութիւնից, ձեռներից, ոտներից... նրա պատառոտուած մարմնից դուրս են ընկած ոսկրները,—մի մի տեղ է Թոյլ խոխոջում. հասել է խեղճի մահուան վերջին օրհասական րոպէն... Այստեղ կանգ եմ առնում չուզելով շարունակել, գուցէ ընթերցողի քնքոյշ զգերը գրգռեմ։

Պարոն Նօբէլը միշտ այցելում է հիւանդներին ամեն օր, և հարց ու փորձ է անում նրանց դրութեան մասին. վնասուածների ընտանիքներին Թոդակ է նշանակել նա։

Գողթնեցի.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ՖՐԱՆՍԻԱ.—Ռուլանժական կուսակցութիւնը ոչ մի միջոց չէ խնայում Ֆրանսիական ներկայ մինիստրութեան վարկը ժողովրդի աչքում ձգելու համար. վերջերս էլ նրանք օրինակ լուրեր տարածեցին, որ իբր Թէ Ֆլօկէի մինիստրութիւնը մտադիր է պատգամաւորների ժողովին առաջարկել և ընդունել տալ մի որոշում, որով կարողանան ձերբակալել Ֆրանսիական կառավարութեան (ներկայ մինիստրութեան) բոլոր ներկայ հակառակորդներին և պատժել՝ բանտարկութեամբ, աքսորով և այլն։ Գոնուեցան Թերթեր, որոնք ուրախութեամբ արձագանգեցին և տարածեցին այդ այլանդակ լուրերը։ Այնպէս որ մինիստր-նախագահ Ֆլօկէն ստիպուած եղաւ յայտարարելու, որ բուլանժականների տարածած այդ լուրերը սուտ են և լոկ նպատակ ունին հասարակութեան ուշադրութիւնն իրենց տրգող գործերի վրայից հեռացնելու։ Այդ նենգամիտ լուրերը ապացոյց են, որ բուլանժական շարժումը վտանգաւոր է երկրի համար և հարկաւոր է նրա դէմ բուռն միջոցներ գործ դնել։

—Պատգամաւորների ժողովի անդամ Թիւլլէն հրապարակով մեղադրեց բիւդջէի յանձնաժողովի ադամներից շատերին որպէս կաշառակերներ, վատնիչներ։ Ցետոյ հրատարակեց «Mes Dossiers» անունով բրօշիւր՝ նոյն ուղղութեամբ։ Թիւլլէի դէմ սկսուած են մի շարք դատական գործեր այդ խնդրի վերաբերմամբ. գործի մէջ խառնուած է հասարակապետութեան նախկին նախագահ Գրէվիի փեսան, յայտնի Վիլսօնը։ Շատ հետաքրքիր միջադէպեր են ծագելու այդ խընդրից։

—Նոյեմբերի 13-ին գեներալ Բուլանժէն բանկիստում խօսել է մի Ճառ, որի մէջ կրկին բողոքել է այն մեղադրանքների դէմ, որ իբրև Թէ ինքը Թագուն մտքեր ունի. «Իւրաքանչիւր ոք, որ ուզում է ապրել, ասում է Ճառախօսը, պէտք է զօրաւոր լինի։ Եւրոպայի ներկայ դրութեան միջոցին, ի նկատի ունենալով բոլոր ազգերի ձեռք առած միջոցները, մենք անվտանգ կացութեան մէջ չենք լինիլ, եթէ աւելի քիչ, մեր հարևաններից քիչ զինուած կլինինք։ Ֆրանսիան նախանձախնդիր է իւր իրաւունքներին, բայց նա ծարաւ է խաղաղութեան։ Ես աշխատում եմ իմ պատասխանատուութեամբս։ Ես աւելի հայրենասէր եմ քան զինուոր։ Ես խիստ ցանկանում եմ, որ խաղաղութիւնը պահպանուի։ Բայց խաղաղութիւնն երկու տեսակ է՝—խաղաղութիւն, որը խընդրում են և խաղաղութիւն՝ որ հաստատուն և արժանաւոր վարմունքով են ստանում։ Բոլոր Ֆրանսիական սրտերը համար վերջինս աւելի յարմարն է»։ Նա յարձակւում է քաղաքական այն գործիչների վրայ, որոնք խաղաղութիւնը պահպանելու համար խոնարհւում են օտարների առաջ։ Նա կարծում է, որ Ֆրանսիացիներին միացնելու համար բաւական է միայն կոչում անել։

ԵԳԻՊՏՈՍ.—Մուսուլման-փաշան Սուլթանի կառավարութեան դիմել էր շուտով Սուակիմի համար մի որոշում կայացնել, որովհետև ապստամբ դէրվիշները վտանգ են սպառնում նրան։ Սուլթանի կառավարութիւնն առաջարկել էր Եգիպտոսի կառավարութեան, որ վերջինս իւր զօրքերով պաշտպանէ Սուակիմը, իսկ եթէ անկարելի լինի այդ, այն ժամանակ Սուլթանի վառավարութիւնը կուղարկէ իւր զօրքերը։ Այժմ հեռագիրը հաղորդում է, Թէ Մուսուլման-փաշան կրկին հեռագրով դիմել է Սուլթանի կառավարութեան, առաջարկելով անմիջապէս Սուակիմ ուղարկել Թիւրք զօրք, որովհետև, Մուսուլման-փաշայի կարծիքով, խարլիֆայի զօրքերի ներկայութիւնն դէրվիշներին կ'ստիպէ դադարեցնելու իրենց Թշնամական գործառնութիւնները և Բ. Դուռը կը կարողանար այն ժամանակ բանակցութիւն սկսել դէրվիշների հետ։

Նոյեմբերի 14-ին անգլիական պատգամաւորների ժողովը յայտնել է, որ կաբինետութեան միջոցին բրիտանական զօրքերը կ'օգնեն եգիպտական զօրքերին Սուակիմի մօտ, բայց նրանց գործառնութիւնները կը սահմանափակուին միայն ապստամբներին հետ մղելով։

ՍԵՐԲԻԱ.—Սերբիական Նատալիա Թագուհին սինոդին ներկայացրել է իւր որդուն Միլան Թագաւորի և միտրոպոլիտ Միխայիլի ուղերձները, որոնցով նա հրաժարում է իւր իշխանութիւնից։ Նոյեմբերի 15-ին Նատալիա Թագուհին հրաժարական է տուել։ Նոյեմբերի 16-ին Միլան Թագաւորը հրաման է արձակել, որով նշանակում է Սերբիայի նոր կառավարութիւն։ Նոր կառավարութեան նախագահ է նշանակուած Ռիստիչ։ Նոյեմբերի 17-ին Միլան Թագաւորը հրաման է արձակել, որով նշանակում է Սերբիայի նոր կառավարութիւն։ Նոր կառավարութեան նախագահ է նշանակուած Ռիստիչ։ Նոյեմբերի 18-ին Միլան Թագաւորը հրաման է արձակել, որով նշանակում է Սերբիայի նոր կառավարութիւն։ Նոր կառավարութեան նախագահ է նշանակուած Ռիստիչ։

բապօլիտ Թէոդոսի որոշման դէմ, Թագուհին իւր բողոքի մէջ աշխատելով ապացուցանել իւր ամուսնու վարմունքի անարդար լինելը և Թէոդոս մետրապօլտի ապօրինի վարմունքը իւր ապահարզանի խնդրում, յայտնում է, որ յանուն եկեղեցական, քաղաքական և խղճի օրէնքների, չէ ընդունում այդ որոշումը և իրեն համարում է Թագուհի Սերբիայի իւր բոլոր իրաւունքներով։

—Սերբիայում կատարուել պատգամաւորների ժողովի անդամների ընտրութիւնը, որի միջոցին, հակառակ Միլան Թագաւորի կարգադրութեան, կառավարութեան կողմից ձնշումներ էին գործ դրել ընտրողների վրայ, որպէս զի կառավարութեան կուսակիցները ընտրուին։ Այդ մասին մի քանի բողոքներ են հասնում Թագաւորին, որ քննելով նրան, տեսնում է անարդարութիւնը և պատուիրում է նորից ընտրութիւններ անել՝ ազատ ձէ ձնշումներից։

ԹԻՒՐԻԱ.—կ. Պօլսից «Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» հեռագրում է նոյեմբերի 16-ին. «Դիպլոմատիական աղբիւրներից յայտնի է, որ նոր փորձեր են եղել Թիւրքիային միջին եւրոպական դաշնակցութեան հետ միացնելու համար։ Սուլթանն անցեալ հինգշաբթի այդ մասին խորհրդակցեց Ջեմիլ-փաշայի հետ և Ռուսիային համակրող Ռուշդի-Բէյ-փաշայի հետ։ Ոչինչ որոշում չէ եղել։

—Ղալաթայի պերմանական պօստի վերատեսուչ կրօլը նշանակուած է Թիւրքական պօստի տեսուչ-տեղապահ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Վարշաւայում, տեղական Թերթերի ասելով, շուտով բացուելու է դրագէտների և հրապարակախօսների ժողովարան։

*** «Kuryer Warsz.» Թերթը հաղորդում է, որ մի պարոն մտադիր է Վարշաւայում գեղեցկուհիների ցուցահանդէս կազմելու, և այդ նպատակով նշանակել է 3000 րուբլի, որի 1000 րուբլին պատրաստութիւն տեսնելու համար է, իսկ մնացածը մրցանակի համար՝ 900 ր., 700 ր. և 400 րուբլի։

*** Բումինեայի Թագուհին, որ յայտնի է կարմէն Սիլվա կեղծ անունով, մի նոր գիրք է հրատարակում, որ մի հէքիաթ է և նշանակուած է պրինց Հէնրիխ Բէյս XXXII-ի համար։ Ծախուելու համար այդ գրքից հրատարակուած է միայն 75 օրինակ։

*** Լօնդոնի հռչակաւոր Trafalgar — Sguare-ում կանգնեցրել են «Խրիմեան հերոս»-ի գեներալ Գօրդոնի արձանը։

*** Դրօհիճ նահանգում մօտերքս հանգուցեալ Հարուստ կալուածատէր տիկին Բրօդինեան 300,000 րուբլի կտակել է գժատուն հիմնելու համար։

*** Ցայտնի անգլիացի Ֆօն Բրայնը, որ նոր էր առողջացել երկարատև հիւանդութիւնից, կրկին հիւանդացել է Թոքերի բորբոքումով։ Հիւանդութիւնը վտանգաւոր է նրա ծերութեան պատճառով։

*** Նոյեմբերի 4-ին Ֆրանսիական Հեմարանում կայացաւ մրցանակների հանդիսաւոր բաշխումը։ Առաջին օսկէ մեդալը ստացաւ Բումինեայի Թագուհին «Penssées d'une Reine» գրքի համար։ Նոյն օրը բաշխուեց և բարեգործութեան և բարոյականութեան համար նշանակուած մրցանակը։ Առաջին տեղը բռնում է օրիորդ Մարի Պօլին Բաուլտը, որ 30 տարի շարունակ գործել է անձնազոհութեամբ բարեգործական նպատակներով։ Նրան տուել են 2000 Ֆրանկի մրցանակը։ Ուրիշ երեք հոգու տրուած է 1500-ական Ֆրանկ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 22 Նոյեմբերի.—Անգլիական բանկը իւր դիսկօնդը 5-ից իջեցրեց 3⅞%-ի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ
22 Նոյեմբերի։

Լօնդօն 98,50 ր., 97,80 ր., 98,40 ր.
Համբուրգ 48,50 ր.
Պարիզ 38,75 ր., 38,60 ր., 38,75 ր.
Գուլիմպերիայ . . 7 ր. 87 կ. սակ.
Մաքս. կուպօն 157 ր. 50 կ. սակ.
Ազծաթ . . . . 1 ր. 18 կ. գն.
Բօրսային դես. 6³/₄ և 7³/₄%
Պետակ. բանկի 5% տոմս.
1-ին շրջանի. . 98 ր. 25 կ. սակ.
2-րդ . . . . . 97 ր. 87 կ. սակ.
3-րդ . . . . . 97 ր. 50 կ. գն.
4-րդ . . . . . 97 ր. 87 կ. սակ.
5-րդ . . . . . 97 ր. 50 կ. գն.
6-րդ . . . . . — ր. — կ. սակ.
100 և 1000 ր. արվեստեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի . 97 ր. 25 կ. սակ.
2-րդ . . . . . 97 ր. 25 կ. սակ.
3-րդ . . . . . 97 ր. — կ. սակ.
Առաջին 5% նեղքին փոխառութեան
տոմսեր . . . 270 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 241 ր. 25 կ. գն.
5¹/₂% բէնտեր . 102 ր. 12 կ. սակ.
Ոսկէ բէնտ . . 180 ր. — կ. սակ.
Թիֆ. քաղ. վարկի քնկեր.
օբլեգ. . . — ր. — կ. գն.
Պետական բանկի
4% տոմսեր . . 81 ր. 50 կ. սակ.
Երկաթուղու բէնտ — ր. — կ. գն.
Ազնուակ. Հող. բան.
կի գրաւաթղթերը — ր. — կ. գն.
Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը վերջում հաստատուն է։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

VIN
DE PEPTONE PEPSIQUE
DE
CNAPOTEAUT
Pharmacien de 1-re classe
A PARIS
AUTORISÉ EN RUSSIE
Պարիզի առաջնակարգ դեղագործ
Պ. Շապօտօի հնարած
ՎԻՆ ԴԸ-ՊԵՊՏՕՆ ՊԵՊՏԻՔ
անուանեալ գինին
Ռուսաստանում ընդունուած.

Առանց ստամոքսը հոգնեցնելու սնուցանել հիւանդ կամ ապաքինեալ անձերը։

Ահա այս դժուարին խնդիրն է որ լուծեց վերոյիշեալ համեմ գինին։ Այս դեղի յատկութիւնն է կազդուրել և սնուցանել ստամոքսի, լեարդի, աղիքների զանազան ախտերի, ինչպէս նաև դժուարամարսութեան, անախորժութեան, անարիւնութեան հետևակայ եղող հիւանդները։ Սնուցանում և զօրացնում է նաև շաքարախտից, զանազան տենդից, Թանչքից (dysenterie) քաղցկեղից (cancer) և այլ տեսակ ուռոյցքներից հիւծող և մաշուող հիւանդները։ Միով բանիւ այն ամեն պարագաներու մէջ, որը անհրաժեշտ է սնուցանել մանր հիւանդները ու Թոքախտ ունեցողները և կազդուրիչ սնունդով վերանորոգել նրանց ոյժը, և որոնց համար ոչինչ օգուտ չեն տալիս դանազան տեսակ մսի հեղեղն ու ջրերը և հում միսը, Շապօտօի գինին միայն կարող է օգտակար լինել։ Այս գինին մերերի և մանուկների համար սննդարար հեղեղներից ամենաընտիրն է և կաթնատու կանանց կաթն էլ առատացնում է։

Ծախվում է Պարիզ, Վիվիէն փողոց, № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։

(M) ը 30—11

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՆՈՑՇԱՀՈՍ ԻՐՔԵՐ
№ 4711
ՆԱՐԳԻԶ
3 րուբ., 2 ր. և 1 ր. 50 կ. սրուակը. իւր գեղեցիկ առատ հոտի պատճառով նոյնպէս չուտով կ'արժանանայ կանանց ուշադրութեանը, ինչպէս և այնքան ընդունուած
№ 4711
ՊՕՒԱ
դուխխները
կանաչ-ոսկեգոյն գրոշմանիշով. 3 ր., 2 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. սրուակը.
№ 4711
VIOLETTES DE PARME
2 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 25 կ. սրուակը, որ իւր նուրբ հոտով գերազանցում է բոլոր այլ դուխխները։
Գնելիս ուշ դարձնէք
№ 4711
(կառավարութիւնից հաստատած) գործարանի մարկայի վրայ, որը գտնւում է ամեն մի գրոշմանիշի վրայ իբրև որոշող նշան։
Գտնւում են Ռուսիայի բոլոր անուշարոյր նիւթերի և դեղատնային մեծ մագազիններում։
(M.) 3—2

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ
акушерки
С. З. ИЗАНОВОЙ
Сололаки, Садовая ул., д. № 42.

ԾՆՆԴԱՐԱՆ
ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՍՕՖԻԱ ԽԻԶԱՆԵԱՆԻ
Սալօլակի, Սադօվայա փողոց, տ. № 42.
Թէ ցեղկուաչ և Թէ գիւղերուաչ ամենայն ժամանակ՝ ընդունվում են յղիները, երկունքով բռնուածները (ցաւողները) և ծննդականները, որոնք խնամվում են շարունակ մանկաբարձի հսկողութեան տակ. տրվում է նրանց նաև սպիտակեղէն և կերակուր։
Ծննդի և ծննդին հետևող շրջանի խնամատարութեան համար վճարում են՝ 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-ից մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։
Օրական 1-ից մինչև 3 րուբլի
X—36

№ 75

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ Է
Մաուրոր, բարոյական ախտ և անբարոյականութեան զոհերի համար
ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ
հեղ. դօկտօր ՐՕՏԱՈՒԻ
Ռուսերէն հրատարակութիւնը երեք գծագրութիւններով է և գինն 1 րուբլի։
Թող այս գիրքը կարդայ ամեն ոք, որ վերոյիշեալ տխուր ուշնի. նա շատերին փրկել է յոյսնի կորուստից։
1 ր. պոստալօն պէս գրէք հրատարակիչ Ր. Ֆ. Բիրեյչ մագազինը Լայպցիգում՝ ուղարկում է գիրքը։ (Հասցէն. R. F. Bierey's Verlags-Magasin in Leipzig).
(M) 50—45

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում
Գնացք է
Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն. 3 ժ. 21 վ. ց.
Ազստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.
Գալիս է
Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, » 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Ազստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

Թիֆլիսի յայտնի գրատներում վաճառւում են
ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ
հետևեալ հրատարակութիւնները.
ԵՐԵՔ ՔԱՋԵՐ
կօմեդիա 1 արարուածով
ԱՅ ՔԵԶ ՕՑԻՆ
վօդևիլ 1 արարուածով
ԷԼԻԶԱՑԻ ՎԻՃՏԸ
(վէպվիլ)
Իւրաքանչիւրը 20 կոպէկ։
6—6

Կիրակի, 27 նոյեմբերի Թիֆլիսի Ֆոլվարանի դահլիճում լինելու է պարահանդէս ՀԱՑՈՒՀԵՒՑ ԲՈՒԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ օգտին։ Տոմսակները կարելի է ստանալ Ստանիսլաւ Զարախչեանի և Տէր Յովսէփեանի մագազիններում, իսկ պարահանդէսի օրը՝ կլուբի 2վէյցարի մօտ։ Տոմսակների գինը՝ 2 րուբլի է։ (Խմբ.) 4—2

„ՆԵՂՈՍ"
ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Լրագրոյս տարեկան բաժանորդագինն է ամեն տեղ համար 10 Ֆրանք, —վեցամսեայն 5 Ֆրանք. մեկ կանխիկ վճարելի։
—Փոստային ծախսը համագրութեանս կը վերաբերի։
—Լրագրոյս վերաբերեալ ամեն կարգի գրութիւնք պէտք չունի հետևեալ հասցէիս. «Առ խմբագրութիւն «ՆԵՂՈՍ» լրագրոյ» յԱլէքսանդրիա (Եգիպտոս). (պօստ Էժիպսիէն)։ A la Rédaction du Journal Arménien «NEGHOS», Alexandrie (Egypte). (Poste Egyptienne).
ԽՄԲԱԳԻՐ—ՏԷՐ ԱՆՏՕՆ ՌՇՏՈՒՆԻ
(Խ.) 5—2

ԴՕԿՏՕՐ ԺԵՐԱՐԻ ԵՐԿԱԹ
ՌՈՒՍԻԱՅՈՒՄ ԹՈՓԼԱՏՐԱԾ
Այս երկաթեայ գարմանն թեթևակի լուծողական լինելու առաւելութիւնն ունի. Պարիզի Բժշկական Ճեմարանի հաշիւը ցոյց է տալիս, որ նա աշխարհամբ գործ է դրվում 25%-ի չեշտությամբ, արեան հաւասարակշռութեան կամ անհրաժեշտ դէպքում։
Դեպօն գտնվում է Պարիզում, 8, rue Vivienne, և Ռուսիայի նշանաւոր դեղատներում։ 26—10

ԱՐԴԻՒՆԱԲՕՏԱԿԱՆ-ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ
ԱՐԴԵՆ ԲԱՑՈՒԱԾ ԵՆ։
Ընդունելութիւնները շարունակում են։ Ծրագրի մասին դիմել հիմնադրին։ Զբաղանելով շաւերի խնդիրներին, ազատ լսողների համար մուտքը նշանակուած է 1 ր., իսկ կուրսային լսողների համար տարեվճարը մնում է 75 ր.։
Դասախօսութիւնները լինելու են ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամը 6—7 երեկոյեան։
Հիմնադիր կուրսերի Ա. Արամխանեանց
Тифлисъ, Гановская ул., д. Іоаннисіани.
10—7

ԱՐԴԵՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
ԵՒ
ՇԱՏ ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԷ
ԳԵՈՐԳ ՉՈՒԲԱՐԻ
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ,
1) ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ
2) ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
3) ՄԱՀՏԵՍԻ-ՍԱՐԳԻՍ
4) ՅԻՄԱՐ ՈՋԽԱՐՆԵՐ
5) ՄՈՌԱՑՈՒԱԾ ՇՈՒՆ
6) ՆԱ ՄՊԱՍՈՒՄ Է ԴԵՌ
Գրքոյկը գինն է 1 ր., հանապարհածախով—1 ր. 20 կ.
ա) Յանկացողները դիմում են Թիֆլիս, «Նոր-Դար» լրագրի խմբագրութեանը և կամ
բ) Հեղինակին այս հասցէով.—Москва, студенту-юристу Г. И. Чубарову—до востребованія.
(Խ.) 20—20

Дозволено цензурою. Тифлисъ, 23-го Ноября 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրատենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова